Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-317-27.06.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-147-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ մաս.

«6. Հակակոռուպցիոն կոմիտեն կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանում դեպոզիտ հաշիվ: Դեպոզիտ հաշվի ֆինանսական միջոցների տնօրինման կարգը սահմանվում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից:»:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի՝

1. 7-րդ կետում «հրաժարականի դիմում» բառերից առաջ լրացնել «հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից» բառերը:

2. 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով.

«8) հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի կողմից պաշտոնից ազատվելու վերաբերյալ գրավոր դիմումը Վարչապետին ներկայացնելը և վերջինիս կողմից նրան պաշտոնից ազատելը:»:

Հոդված 3. Օրենքի 48-րդ հոդվածի՝

1. 15-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորված մրցութային հանձնաժողովի գործունեությունը դադարում է, եթե անցկացվող մրցույթների արդյունքում համալրվել է և՛ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման, և՛ ինքնավար պաշտոնների համալրման արդյունքում թափուր պաշտոնների 60 տոկոսը: Հակակոռուպցիոն կոմիտեի մնացած թափուր պաշտոնների համալրման համար նոր մրցույթ անցկացվում է սույն օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված մրցութային հանձնաժողովի կողմից:»:

2. 16-րդ մասի երկրորդ նախադասությունից հանել «հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից» բառերը, իսկ «11-րդ» թիվը փոխարինել «12-րդ» թվով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ-317-27.06.2022-ՊԻ-011/1

Լրամշակված նախագիծ

երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-147-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ մաս.

«6. Հակակոռուպցիոն կոմիտեն կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանում դեպոզիտ հաշիվ~~, որում կուտակվող միջոցները տնօրինվում են Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից~~: Դեպոզիտ հաշվի ֆինանսական միջոցների տնօրինման կարգը սահմանվում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից:»:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի՝

1. 7-րդ կետում «հրաժարականի դիմում» բառերից առաջ լրացնել «հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից» բառերը:

2. 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով.

«8) հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի կողմից պաշտոնից ազատվելու վերաբերյալ գրավոր դիմումը Վարչապետին ներկայացնելը և վերջինիս կողմից նրան պաշտոնից ազատելը:»:

Հոդված 3. Օրենքի 48-րդ հոդվածի՝

1. 15-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորված մրցութային հանձնաժողովի գործունեությունը դադարում է, եթե անցկացվող մրցույթների արդյունքում համալրվել է և՛ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման, և՛ ինքնավար պաշտոնների համալրման արդյունքում թափուր պաշտոնների 60 տոկոսը: Հակակոռուպցիոն կոմիտեի մնացած թափուր պաշտոնների համալրման համար նոր մրցույթ անցկացվում է սույն օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված մրցութային հանձնաժողովի կողմից:»:

2. 16-րդ մասի երկրորդ նախադասությունից հանել «հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից» բառերը, իսկ «11-րդ» թիվը փոխարինել «12-րդ» թվով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-317-27.06.2022-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն Պատգամավոր՝ Վլադիմիր Վարդանյան	**«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ 1-ին հոդված**	Առաջարկվում է Նախագծով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 8-րդ հոդվածում լրացվող 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6. Հակակոռուպցիոն կոմիտեն կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանում դեպոզիտ հաշիվ: Դեպոզիտ հաշվի ֆինանսական միջոցների տնօրինման կարգը սահմանվում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից:»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: